սանք մի քարայրի դռան, որ ներկված էր դժգոյն դեղնի և կարմրի խառնուրթներով: Այրի դռան շինված էր մի փոքրիկ խղիկ, այստեղ կենում էր այրի պահապանը, որ մի առոյգ ծերունի էր: Գիւղը բաղկանում էր վաթսուն տնից, որոնք իւրեանց ոչխարներով, տաւարներով, ընտանիքով տեղաւորուած էին այրի մէջ:

Երբ մտանք այրի մէջ միտս ընկաւ Վերգիլիոսի նկարագրած տարտարոսը:

Քարայրի ներսը սևացած էր ծխից. նորա աջ և ձախ անթիւ խոռոչներից, ուր տեղաւորուած էին ընտանիքներ, տաւարներ, ոչխարներ, ոտտանայի նման դուրս էին գալիս նորա բնակիչները, որոնց գոյնը դժգոյն դեղնութեամբ ներկվել էր ծխից: Ես առաջնորդիս յայտնեցի, որ ցանկանում էի այրի բոլոր խորերը պտտել: Նա իմ ցանկութիւնս հաղորդեց պահապանին, որ մեզ ընկերացել էր, բայց նա յայտնեց որ այդ բոլորովին անկարելի է. նորա համար, որ մենք քարայրի անթիւ բաժանմունքներում անտարակոյս կ'մոլորվէինք և թերևս այստեղից չ'կարողանայինք բոլորովին դուրս գալ. բացի այդ, շարունակեց նա, ճանապարհի վերայ կան այնպիսի լայն վիհեր, որոնք իջնում են երկրի խորը և լիքն են ջրով, դրանք կամրջելու համար հարկաւոր էին փայտեր և տախտակներ, որոնք այնտեղ չկային:

"Բայց դուք չ'գիտէք, թէ այրը ինչքան է ձրգ-